

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք *)

1. Սղալել

Կովկասի բարբառներում (Երևան, Ղազախ, Ղարաբաղ, Շուշա և այլն) գործածան ձև է սղալել, «յղկել, կսկել, յարդարել»։ օր. մազերը սղալում ե. 2. «չոյել, փաղաքչել, փայփայել»։ օր. զլուխը սղալի, փողը ձեռքից առն։ Այս բառից է կազմուած սղալա՝ փեհ Ղրբ. «հարթիչ ողորկիչ փայտ»։

Արեմտեան բարբառներում չկայ այս բառը։

Փոխ առնուած է արաբ. sqb արժատից. հմմտ. sayqal յղկում, հարթում, արծնում. որից mosqala ակնագործի յղկիչ գործիք (աղաւաղեալ մասխալա ձևով գործ են անում նաև Պօլսի հայերը)։ Արաբերէն բառը մտել է նաև թուրքերէնի և պարսկերէնի մէջ, և տուել է նոր ձևեր. ինչ. թրք. sayqallamaq «արծնել, յղկել», պրս. sayqalgar «արծնիչ, յղկիչ»։

Արաբ. q ձայնը Կովկասի բարբառներում դառնում է ղ։

2. Պասզբել

Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան մէջ (տես Հայերէն նոր բառեր, էջ 95) գտել էի մի նոր բառ՝ պասզբել ձևով. «Եւ մի ծախեսցի դարձեալ ձուկն ի բիւրուց մարմնոց, այլ պասզբեալ ի գզրոցի դիցի այրն և մի որդունը և մի այլ ինչ վտանգեացեն»։ (Տիմոթ. էջ 323)։ Այս հատուածը առուած է Ոսկերեքանի Պօղոսի թղթերի մեկնութիւնից, որ ոսկերեքանի թարգմանութեամբ էլ հասած է մեզ։ Այս թարգմանութեան մէջ (տպ. Վենետ. 1862, հր. Բ, էջ 446) համապատասխան հատուածի դէմ գտնում ենք «այլ պասեալ և տապանն այրն լինիցի»։ Որանից հետեցրել եմ պասզբել բառի նշանակութիւնը «փաթաթել, պատատել, ծրարել»։

Պասզբել բառի համար գտնում եմ նաև մի նոր վկայութիւն Գրիգոր Մազիստրոսի Գամակտականի մէջ (տես Մէնէվիչեանի նոր բառիպ հրատարակութիւնը, էջ 81). «Տարփիմը ցանգ տածել և պասսալայել և բուծել» (ձեռ. տարբ. պասրզբայել, պասզբայել)։ Հ. Մէնէվիչեանը գտնում է այս բառը Արիստակէս Գրչի և Երեմիա վարդապետի հին բազբքերում մեկնուած «ժողովել (ամփոփել)

*) Տես Արաբատ 1911 էջ 670—675։

հոգալ նշանակութեամբ)», որով ինքն էլ թարգմանում է «ժողովել, պատասպարել»:

Ես կարծում եմ որ աւելի լաւ է տալ պարզապէս «պահել» նշանակութիւնը, որ շատ լաւ յարմարում է թէ Տիմոթէոսի օրինակին և թէ Գամաղտականին: Ի հարկէ անյարմար է ասել մարդու համար «գգրոցի մէջ փաթաթել կամ ծրարել», բայց շատ յարմար է «գգրոցի մէջ պահել»: Պահել նշանակում է նաև «սնուցանել մեծացնել» և այս իմաստով է Գամաղտականի մէջ. «Ճանկանում ենք միշտ խնամել, պահել և սնուցանել»:

3. Պայապիս Քաղեայ

Արամ նահապետի յաղթահարած երեք թշնամիներից մէկն էր Կապադովկիայի Պայապիս Քաղեայ իշխանը (Խոր. Ա. Ժգ): Հայոց մէջ այս անունը բնաւ չի պատահում: Զգիւեմ թէ օտարների մէջ իրօք կայ այսպիսի անուն թէ Խորենացու սարքածն է:

Բառը կազմուած է Պայ, ապիս և քաղ բառերից: Պայը մի առասպելական անասուն էր. Եւ զպայն իմն ի մարդկանէ. Ո՛չ երբեք ի մարդկանէ Լլեալ պայն. (Եզնիկ. հմմտ. նաև Ոսկ. Պաւղ. Ա. 602): Ապիսը Եզիպտացոց պաշտած յայտնի կռիւն է, իսկ քաղ «արու այծ, նոխազ», որից եղջերուաքաղ առասպելական էակը: Երկու բառերի յարադրութեամբ ունինք նաև Ոսկերեքան Մատթ. Ա. 4 վարդապայ քաղ ձեր, որ Հ. Արսէն Բաղրատունի սրբադրում է մարդապայ քաղ, որը ընդունում է նաև Նորայր (Քննասէր, Ա. էջ 10): Երեքն էլ անասունի անուններ են: Հայոց մէջ շատ կայ անասունների անունից ծագած մարդու յատուկ անուն:

4. Ուլ

Ուլ (սևա. ուլու, ուլոյ) բառը զանազան ձևով է մեկնուած: Հայկազեան Բառարանը համեմատում է թրք. ուլագ, օղլագ հոմանիշների հետ: Տէրվիշեան (Մատիս 1881 մայիս 5) ազգակից է կարծում ելն, եղջերու բառերի հետ: Հիւնքեարպէլէնտեանը ցույց բերից է հանում Niedermann BB 25, 83 յն. *evēlos* և լատ. *inuleus* «եղնիկի ձագ» զառերի հետ է կապում: Patrúány SA 2, 163 համեմատում է յն. *πῶλος*, գոթ. *fula* «քուսակ» բառերի հետ: Evald Lidén շուեռիացի նոր հայագէտը իր Armenische Studien պատուական աշխատութեան մէջ (էջ 25) մերժում է այս վերջինը՝ թէ ձայնական անյարմարութեան և թէ նշանակութեան տարբերութեան պատճառով և առաջարկում է ալ-ոչ հոմանիշի հետ՝ կցել

լատ. alo, գոթ. alan, հին. alim սնուցանել, մանաւանդ լատ. sub-al-as, prôles «յաջորդք, սերունդ, ձագեր» բառերին:

Մերթում եմ Lidén-ի ստուգարանութիւնը և կարծում եմ որ Patrubány-ի անցողակի առաջարկած ստուգարանութիւնը ուղիղ է:

Յն. πῶλος «քուսակ» բառի ընկերներն են՝ յն. ὠολίον «մորուկ», գոթ. fuia, հրգ. folo, fulin, գերմ. Föhlen, Füllen «քուսակ», լատ. pullus «ձագ»: Նշանակութեան կողմից մեր բառի և սրանց մէջանդ տարբերութիւն չկայ. մեր հին լեզուի մէջ ուլը ոչ միայն այծի ձագն է նշանակում, այլ և եղնիկի ու այծեամի, ուրեմն բուսական ընդհանուր իմաստ ունի: Ընդհանուր է նաև լատ. pullus, որ նշանակում է առհասարակ «ձագ, մատաղ անասուն» և գործ է ածուում ձիի, իշու, հաւեղէնի, մինչև իսկ փաղաքշարար մարդոց համար: Այսպէս էր անշուշտ նաև հնդեւրոպական նախալեզուի մէջ և ընդհանուր նշանակութիւնը յետոյ միւսների մէջ մասնաւորուեց. ձիւտ ինչպէս որ յաւաճակ բառը՝ որ իրանեան yuvan «մատաղատի, մատաղաշ, երիտասարդ» բառն է, փոխ անուելով հայերէնի մէջ՝ մասնաւորուեց նշանակելու միայն էջի, ձիու, կովի ձագ, իսկ աշխարհաբարի մէջ աւելի ևս մասնաւորուելով՝ դարձաւ միայն «էջու ձագ»:

Pullus բառի սկզբնական ձևն է *pûl-os (սեւ Walde, Lat. etym. Wört. 1910, էջ 623): Ծիշա նոյնն է նաև հայերէնի համար՝ Հնդեր. *pûl-os տալիս է հայ. հուլ կամ ուլ, սեւ. ո հոլովումով: Երկու ձևն էլ ունինք. ուլ պահուած է դրարարի մէջ. նոր բարբառներից Տփիսիս, Վան, Երևան, Խարբերդ, Սուչավա ունին ուլ. Ասլանբէգ՝ իւլ: Հուլ պահուած է Ղարաբաղի բարբառում հեօլ ձևով (Գորիս հօլ):

Աւելորդ եմ համարում յիշել Karst-ի համեմատութիւնները, Յուլարձան էջ 406 սումեր. lu «գաւնուկ, ոչխար, մաքի» և էջ 422 թբք. ուլաք, օլլաք «ուլ», որոնք զուտ պատահական բաներ են: Եթէ ուղենայինք կարելի էր նաև ուրիշ նման ձևեր գտնել. ինչ. չաչաթայ օլաք «ուլիկ» և չեչէն. լո՛ւ «քարայծ», որոնք նոյնպէս պատահական են: Առ հասարակ Karst-ի վարդապետութիւնը պէտք է գտնել Մասի վարդապետութեան կողքին:

1912 մայիս 5

Հ. Աճառեան

Ն. Նախիջևան